



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

30 հոկտեմբերի 2009 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 234

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁԻ
ԹՈՒԽՍԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ
2006-2008 թ.թ. ԼՐԱՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՎԱԾ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՍԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 234

2009 թվականի հոկտեմբերի 30-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁԻ
ԹՈՒԽՍԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՍԱՍԻ
2006-2008 թ.թ. ԼՐԱՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՎԱԾ
ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Օգտակար հանաժոնների պաշարների գործակալության Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի լիազումար նիստում կայացած Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի 2006-2008 թ.թ. լրահետախուզման աշխատանքների տվյալներով պաշարների վերահաշվարկման նյութերի քննարկման արդյունքները,

Գիտակցելով համաշխարհային տնտեսական ներկայիս ճգնաժամի պայմաններում տվյալ օբյեկտի շահագործման և գործող արտադրության ընդլայնման արդիականությունը,

Նկատի ունենալով, որ նշված նպատակների իրագործման համար անհրաժեշտ են լրացուցիչ ներդրումներ, որոնց հայթայթումն անհնար է առանց պաշարների հաստատման,
ՀՀ ՕՀՊԳ-ն որոշում է.

1. *Հաստատել* Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի պաշարները 01.01.2009թ. դրությամբ, սույն Որոշման առդիր 1-ի Հավելված 1-ի տվյալներով՝ ստորև բերված աղյուսակի համաձայն.

ՀՀ ՕՀՊԳ

Շիրազ 32 թղ

Պաշարների կարգը	Հանքանոթիները	Հանքաքարի պաշարը, հազ.տ	Մետաղների միջին պարունակությունը		Մետաղների պաշարները, կգ	
			Au, գ/տ	Ag, գ/տ	Au	Ag
1	2	3	4	5	6	7
C ₁	Երակ № 1	123.3	5.03	14.24	620.54	1757
	Երակ № 15	236.5	6.32	43.07	1493.67	10185
	Շտոկվերկ	3744.5	1.46	3.73	5474.02	13949
	Ընդամենը	4104.3	1.85	6.31	7588.23	25891
C ₂	Երակ № 1	496.7	5.35	23.13	2655.90	11490
	Երակ № 15	529.6	5.60	23.70	2966.62	12555
	Շտոկվերկ	16787.7	1.33	3.4	22403.18	57073
	Ընդամենը	17814	1.57	4.55	28025.7	81118
C ₁ +C ₂	Երակ № 1	620.0	5.28	21.37	3276.44	13247
	Երակ № 15	766.1	5.82	29.68	4460.29	22740
	Շտոկվերկ	20532.2	1.36	3.46	27877.2	71022
	Ընդամենը	21918.3	1.62	4.88	35613.93	107009

2. Նշել, որ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի վերաբերյալ մինչ օրս կուտակված երկրաբանական տեղեկատվությունը հիմնականում բավարար է դրա շահագործման մշակվելիք նոր նախագծում լեռնատեխնիկական սկզբունքային խնդիրներին հիմնավոր լուծումներ տալու համար:

3. Ընդգծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի թերուսումնասիրվածության իրողությունը և դրա լրահետախուզման երկրորդ փուլում սույն Որոշման Առդիր 1-ի 2.1. կետում նշված խնդիրների լուծման խիստ անհրաժեշտությունը:


4. Առաջարկել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին ձեռնպահ մնալ օգտակար հանածոների հանքավայրերի Հանրապետական հաշվեկշռում սույն Որոշման 1-ին կետից բխող փոփոխություններ կատարելուց՝ մինչև նախորդ կետում նշված աշխատանքների իրականացումը:

ՀՀ ՕՀՊԳ-ի պետ



Խ. Սապոնջյան

ՀՀ ՕՀՊԳ-ի պետի տեղակալ



Ռ. Կոսեմյան

նյութերի փորձաքննության պատասխանատու





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 234 (378)













ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁԻ ԹՈՒԽԵՍԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՍԱՍԻ 2006-2008 թ.թ. ԼՐԱՀԵՏԱԽՈՒՉՍԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ
ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝

ՀՀ ՕՀՊԳ-ի պետ, Հանձնաժողովի նախագահ Խ.Սապոնցյանը

ՄԱՍՆԱԿՅՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
Հանձնաժողովի անդամներ՝

-  Ռ. Կոսեմյանը
(նյութերի փորձարկման արտասխմատու)
-  Յու. Աղաբալյանը
-  Ա. Անանյանը
-  Հ. Ավետիսյանը
-  Լ. Բաղդասարյանը
-  Ս. Գրիգորյանը
-  Ե. Հովհաննիսյանը
-  Ա. Մաթևոսյանը
-  Ս. Մեխակյանը
-  Հ. Սկրուչյանը
(նյութերի հեղինակ)
-  Լ. Սարգսյանը
-  Ս. Սոտքիասյանը

Ընդերքօգտագործող կազմակերպությունից՝ «Մեգո Գ-ոլք» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Պողոսյանը,
ինձեներ-երկրաբան Խ.Էլոյանը,
Փորձագիտական խմբի անդամներից՝ ՀՀ ՕՀՊԳ-ի գլխավոր մասնագետներ Ա.Բարսեղյանը,
Գ. Քոչինյանը, ՀՀ ՕՀՊԳ-ի փորձագետ Վ. Թովմասյանը

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԻՏԱՐԿՍԱՆՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՎԵԼ.

1.1. Լրացում ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի 01.01.2009 թ. դրությամբ երկրաբանատնտեսագիտական վերագնահատման նյութերի (Հավելված 1):

1.2. ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից ձևավորված փորձագիտական խմբի կարծիքը Լրացմամբ ներկայացված պաշարների հաստատման հնարավորության վերաբերյալ (Հավելված 2):

2. ԴԻՏԱՐԿԵԼՈՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՆՇՈՒՄ Է.

2.1. Փորձաքննության ներկայացված Լրացումը (Հավելված 1) մշակվել է ՀՀ ՕՀՊԳ-ի 18.09.2009 թ. № 230 Որոշման 4-րդ կետի համաձայն և նվիրված է ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի ռեսուրսային ներուժի գնահատմանը՝ «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի կողմից 2006-2008 թթ. այդ օբյեկտում իրականացված լրահետախուզական աշխատանքների արդյունքների հիման վրա: Այդ գնահատականը չի կարող համարվել վերջնական, քանի որ տեղամասում երկակիացանավոր հանքայնացման սահմանները ոչ մի ուղղությամբ դեռևս բացահայտված չեն, և այստեղ անհրաժեշտ է իրականացնել առնվազն ստորև նշված խնդիրների լուծմանը միտված լրացուցիչ աշխատանքներ.

- ա) դաշտային, լաբորատոր և տեխնոլոգիական բնույթի.
 - տեղամասի մակերևույթի տոպոգրաֆիական հիմքի ճշգրտում,
 - երակիկացանավոր հանքայնացման գոտու և դրանում օքսիդացած հանքաքարի տարածման սահմանների ֆիքսում,
 - հանքաքարում ուղեկից բաղադրիչների առկայության և քանակի, ինչպես նաև շարքային մնուլների կրկնօրինակների ստուգողական լրացուցիչ անալիզների արդյունքներով հիմնական անալիզների տվյալների արժանահավատության լիարժեք գնահատում,
 - օբյեկտի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների հստակեցում,
 - հանքաքարի վերամշակման առավել արդյունավետ տեխնոլոգիաների ընտրություն և դրանց համապատասխանող տեխնոլոգիական ցուցանիշների հիմնավորում,

- բ) կամերալ բնույթի.
 - լրացուցիչ ստացված երկրաբանական տեղեկատվության հաշվառմամբ տեղամասի տնտեսական ներուժի ներկայիս գնահատականի ճշգրտում՝ կոնդիցիաների պարամետրերի վերահիմնավորմամբ,

- վերահիմնավորված կոնդիցիաների պարամետրերի հիման վրա տեղամասի պաշարների վերաբերազմում ու վերահաշվարկ:

2.2. Նախորդ կետում նշված խնդիրները, անշուշտ, նշանակալից են տեղամասի հետագա արդյունավետ շահագործումը, ինչպես նաև ընդերքօգտագործումից պետական բյուջե տարբեր հողվածներով գանձվող մուտքերի պատշաճ մակարդակը ապահովելու տեսանկյունից և, ըստ այդմ, պարտադիր ենթակա են լուծման հնարավորինս սեղմ ժամկետներում: Միևնույն ժամանակ, օբյեկտի վերաբերյալ մինչ օրս կուտակված երկրաբանական տեղեկատվությունը հիմնականում բավարար է դրա հաշվեկշռային պաշարները՝ ՀՀ ՕՀՊԳ-ի վերոնշյալ Որոշմամբ հաստատված կոնդիցիաների պարամետրերի օգտագործմամբ բավականին հստակ եզրագծելու ու հաշվարկելու, ինչպես նաև տեղամասի հետագա շահագործման մշակվելիք նախագծում գործնականում բոլոր հիմնական լեռնատեխնիկական խնդիրներին սկզբունքորեն հիմնավորված լուծումներ տալու համար: Ընդ որում, տեղամասում կատարվելիք անհրաժեշտ լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքներով առկա երկրաբանական տեղեկատվության հնարավոր համալրումն ու ճշգրտումը, ամենայն հավանականության չի հանգեցնի լեռնատեխնիկական խնդիրների նախագծային լուծումների և արտադրության տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսված մեծությունների էական փոփոխությանը:

Վերոշարադրյալի հետ մեկտեղ, հատուկ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ տեղամասի վերաբերյալ առայսօր կուտակված երկրաբանական տեղեկատվության հիման վրա հաշվարկված պաշարների որոշ մոտավորությունը ընդհանրապես չի անդրադառնում ընդերքօգտագործման վարձավճարների գծով պետական բյուջե գանձվող գումարների վրա, քանի որ վերջիններս ուղիղ համեմատական են ոչ թե հաշվարկված, այլ շահագործական հետախուզմամբ փաստված մարված պաշարներին:

Այսպիսով, տվյալ դեպքում առկա են բավարար նախադրյալներ փաստացի կուտակված երկրաբանական տեղեկատվության հիման վրա հաշվարկված պաշարների հաստատման համար: Նման որոշումը կնպաստի արտադրության ծավալների ընդլայնմանը միտված տեղամասի լրահետախուզման 2-րդ փուլի աշխատանքների կատարման և հանքավայրի շահագործման նոր նախագծի մշակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման՝ ընդերքօգտագործողի կողմից իրականացվող գործընթացին, ինչը հատկապես արդիական է համաշխարհային տնտեսական ներկայիս ճգնաժամի պայմաններում:

Անդրադառնալով տեղամասի թերուսումնասիրվածության հարցերին կարելի է ընդունելի համարել ընկերության առաջարկն առ այն, որ դրանց լուծումները տրվեն մոտակա 1-1.5



տարվա ընթացքում՝ տեղամասում շարունակվող լրահետախուզական աշխատանքների 2-րդ փուլի շրջանակներում:

2.3. Լրացման հեղինակների կողմից հաստատման ներկայացված պաշարները, ինչպես և հարկն է, գնահատված են տարանջատ՝ երակիկացանավոր հանքայնացման գոտու և երակային մարմինների համար:

Ընդունելի է Լրացման հեղինակների առաջարկն առ այն, որ երակիկացանավոր հանքայնացման գոտու պաշարների որակաքանակական գնահատականը ամրագրվի հիմք ընդունելով ՀՀ ՕՀՊԳ-ի 18.09.2009 թ. № 230 Որոշման Առդիր 1-ի Հավելված 2-ում ներկայացված հաշվարկների արդյունքները, որոնց սխալանքն, իրոք, չի գերազանցում թույլատրելի սահմանները: Նման եզրակացության են հանգել նաև այդ հաշվարկներն իրականացրած ՀՀ ՕՀՊԳ-ի փորձագիտական խմբի մասնագետները (Հավելված 2):

Ինչ վերաբերում է երակային մարմինների պաշարների վերաեզրագծմանը, ապա այն իրականացված է ՀՀ ՕՀՊԳ-ի 18.09.2009 թ. № 230 Որոշման 2-րդ կետով վերահաստատված կոնդիցիաների պարամետրերի կիրառմամբ, հաշվի առնելով ինչպես նախկինում, այնպես էլ տեղամասի լրահետախուզման փուլում անցած բոլոր հետախուզափորվածքների տվյալները: Այդ պաշարների հաշվարկի համար ընտրված երկրաբանական բլոկների եղանակը՝ ուղղաձիգ հարթության վրա դրանց պրոյեկտմամբ, լիովին կապակցված է ինչպես տվյալ հանքամարմինների ձևաբանության, այնպես էլ դրանց հետախուզման եղանակի հետ:

Բոլոր հաշվարկներն իրականացված են կոռեկտ և անսխալ:

Թիվ 1 և 15 երակներում հանքաքարի վերահաշվարկված պաշարների հավելաճը ՀՀ ՕՀՊԳ-ի 26.01.2004 թ. № 28 Որոշմամբ հաստատվածների համեմատ (1386.1-ի փոխարեն 1259.4 հազ.տ) պայմանավորված է քացառապես պաշարների հաշվարկման ստորին սահմանի 20 մ-ով խորացմամբ, ինչը նախատեսված է ներկայումս գործող կոնդիցիաներով:

Ինչ վերաբերում է ոսկու և արծաթի վերահաշվարկված պաշարների կրճատմանը նախկինում հաստատվածների համեմատ (համապատասխանաբար 8007.7-ի փոխարեն 7736.7 կգ և 44.7-ի փոխարեն 36.0 տ), ապա այն կապված է հանքաքարում այդ մետաղների միջին պարունակությունների որոշ նվազման հետ (ոսկի՝ 6.36-ի փոխարեն 5.58 գ/տ, արծաթ՝ 35.49-ի փոխարեն 25.96 գ/տ):

Հանքաքարի վերահաշվարկված պաշարներում մետաղների միջին պարունակությունները, ինչպես և հարկն է, որոշվել են հիմք ընդունելով նախկինում և լրահետախուզման փուլում անցած հետախուզափորվածքներից վերցված շարքային մնուշների տվյալները: Ընդ որում, հիմքեր չկան այդ տվյալները կասկածի տակ առնելու համար, քանի որ ինչպես նախ-

կինում, այնպես էլ լրահետախուզման փուլում կատարված անալիզների արժանահավատու-
թյունը ապացուցվել է արտաքին ստուգողական անալիզների տվյալներով (Լրացման Հա-
վելված 2-Լ): Նկատի ունենալով վերոշարադրյալը, ինչպես նաև հաշվի առնելով, որ լրահե-
տախուզական փորվածքներով ապահովվել է մնուշարկման ցանցի խտացումը, կարելի է
ավելի իրատեսական համարել հանքաքարում մետաղների միջին պարունակությունների
վերահաշվարկված ցուցանիշները:


Լրացման հեղինակների կողմից հաստատման ներկայացված պաշարների որոշ մո-
տավորության պատճառով, նպատակահարմար է նույնիսկ, սույն Արձանագրության 2.2. կե-
տի նախավերջին պարբերությունում նշված նկատառումներից ելնելով, դրանց հաստատման
պարագայում, ձեռնպահ մնալ Օգտակար հանածոների հանքավայրերի հանրապետական
հաշվեկշռում փոփոխություններ կատարելուց, մինչև սույն Արձանագրության 2.1. կետում
նշված խնդիրներին (հատկապես հիմնական բաղադրիչների միջին պարունակությունների
ճշգրտման և ուղեկից բաղադրիչների գնահատման) սպառիչ լուծում տալը:

3. ԱՄՓՈՓԵԼՈՎ ՍՈՒՅՆ ԵՎ 16.09.2009 Թ. ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՍԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է ՆՇԵԼ, ՈՐ.

- ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղա-
մասում 2006-2008 թթ. «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի կողմից կատարված լրահետախուզական աշ-
խատանքների արդյունքներով, իրոք, ապացուցված է, որ ոսկու հանքայնացումը այստեղ չի
սահմանափակվում միայն երակային տիպով (նախկինում հետախուզված № 1 և № 15 երակ-
ներում), այլ այս կամ այն չափով տարածված է նաև հիդրոթերմալ փոփոխված վերին ռիֆեյի
միզմատիզացված լեյկոկրատային պլազիոգրանիտներում, ինչպես նաև միջին յուրայի ան-
դեզիտադացիտների հիդրոթերմալ փոփոխման արգասիք հանդիսացող քվարց-սերիցիտային
մետասոմատիտներում, որոնցով կազմված է վերոնշյալ երակները ներառող երակիկացանա-
վոր հանքայնացման գոտին (շտոկվերկը),

- օբյեկտի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ նախկինում ձևավորված
պատկերացումների ճշգրտումը (տես նախորդ ենթակետը) հանգեցրել է դրա ռեսուրսային նե-
րուծի կարուկ ընդլայնմանը՝ ՀՀ ՕՀՊԳ-ի 26.01.2004 թ. № 28 Որոշմամբ հաստատված ոսկու
8.0 տ պաշարների փոխարեն շուրջ 35.0 տ ոսկու հետախուզված և գնահատված պաշարներ,

- հաստատման առաջարկվող պաշարները գործնականում ամբողջությամբ համա-
պատասխանում են միջազգային դասակարգմամբ՝ չափագրված և հաշվարկված (measured
& indicated) պաշարներին ներկայացվող պահանջներին,



- տեղամասի ռեսուրսային ներուժը չի սպառվում միայն չափագրված և հաշվարկված պաշարներով, այլ ընդգրկում է նաև առնվազն նույն քանակության կանխատեսումային ռեսուրսներ (Inferred resource),

- հաստատման առաջարկվող պաշարները գործնականում ամբողջությամբ կարող են շահագործվել բաց եղանակով: Ընդ որում, առաջնահերթ շահագործման բացահանքի սահմաններում հնարավոր է ընդգրկել համեմատաբար հարուստ (ոսկու առնվազն 2.0 գ/տ պարունակության) առնվազն 16.0-16.5 մլն.տ հանքաքարի պաշարներ,

- օբյեկտի լիարժեք երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ է ապահովել սույն Արձանագրության 2.1. կետում նշված խնդիրների լուծումը, ինչը նպատակահարմար է համատեղել տեղամասի լրահետախուզման 2-րդ փուլի աշխատանքների հետ,

- մինչ օրս կուտակված երկրաբանական տեղեկատվության հիման վրա հաշվարկված պաշարների սխալանքը չի գերազանցում թույլատրելի սահմանները և այդ պաշարները կարող են հաստատվել նախորդ ենթակետում նշվածի պարտադիր կատարման պայմանով:

Հանձնաժողովի նախագահ

Խ. Սապոնջյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՄԵԳՈ - ԳՈԼԴ» ՍՊԸ


Լ Ր Ա Ց ՈՒ Մ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁԻ ԹՈՒԽՄԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՏԵՂԱՍԱՍԻ 01.01.2009թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐԱԲԱՆԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Տնօրեն

Տնօրենի տեղակալ

Ինժեներ-երկրաբան



Պողոսյան

Հ. Սկրտչյան

Խ. Էլոյան

Հանքավայրի վերագնահատման նյութերը ՀՀ ՕՀՊԳ-ի փորձաքննությանն էին ներկայացվել ռուսերեն լեզվով շարադրված „Технико-экономическое обоснование оценки промышленного значения Центрального участка Тухманукского месторождения золота с разработкой кондиций для подсчета запасов по состоянию на 01.01.2009 год “ և „Переоценка запасов Центрального участка Тухманукского месторождения золота по состоянию на 01.01.2009 год“ հաշվետվությունների (այսուհետ՝ սկզբնական նյութեր) տեսքով:

Այդ նյութերը մշակվել էին «Մեգո-Գոլդ» ընկերության կողմից հանքավայրում կատարված լրահետախուզական աշխատանքների արդյունքներով:

Լրահետախուզմամբ պարզվել էր, որ ոսկու արդյունաբերական հանքայնացումը օբյեկտում հարում է ոչ միայն նախկինում հետախուզված թիվ 1 և 15 երակային մարմինների, այլ տարածված է նաև երակները պարփակող միջին յուրայի հրաբխածին (անդեզիտներ, անդեզիտադացիտներ և դրանց պիրոկլաստներ) և կավճի ներժայթքային (գրանոդիորիտներ) ապարներում տարանջատվող հիդրոթերմալ փոփոխված գոտում:

Նշված իրողությունը հանգեցրել էր հանքավայրի երկրաբանական կառուցվածքի, դրա տնտեսական և ռեսուրսային ներուժի վերաբերյալ նախկինում ձևավորված պատկերացումների վերանայման անհրաժեշտությանը: Այդ կապակցությամբ հանքավայրի վերագնահատման սկզբնական նյութերում հիմնավորվել էին լրահետախուզված տեղամասի պաշարների հաշվարկման համար կոնդիցիաների պարամետրերը և իրականացվել էր պաշարների հաշվարկը:

Սկզբնական նյութերի փորձաքննության արդյունքում ՀՀ ՕՀՊԳ-ն իր 18.10.2009 թ. №230 Որոշմամբ հաստատեց միայն կոնդիցիաների պարամետրերը՝ ձեռնպահ մնալով ինչպես նյութերի հեղինակների կողմից հաշվարկված, այնպես էլ գործակալությունում ձևավորված փորձագիտական խմբի կողմից վերահաշվարկված (վերոնշյալ Որոշման առդիր 1-ի Հավելված 2) պաշարների հաստատումից:

Նման որոշումը Գործակալության կողմից պատճառաբանվել էր.

- երակիկացանավոր հանքայնացման գոտու (շտոկվերկի) սահմանների անորոշությամբ,
- հանքաքարում ուղեկից բաղադրիչների պարունակությունների գնահատման բացակայությամբ,
- հանքայնացման գոտու ապարների ծավալային զանգվածի չփաստարկվածությամբ,
- մեծաքանակ շարքային նմուշների անալիզների արդյունքների բացակայությամբ կամ ցածր արժանահավատությամբ,
- շարքային նմուշների հիմնական անալիզների արդյունքների արժանահավատության թերհիմնավորվածությամբ,

- ներկայացված տոպոգրաֆիական հիմքին հորատանցքերի սկզբնակետերի բացարձակ միջերի անհամապատասխանությամբ,
- տարբեր մորֆոլոգիական տիպերի հանքամարմինների (երակներ և շտոկվերկ) պաշարների տարանջատ հաշվարկման պարտադիր պահանջի չապահովմամբ,
- ընդերքում հետախուզված ամբողջ պաշարների գնահատման փոխարեն, միայն բացահանքի սահմաններում ընդգրկված պաշարների հաշվարկմամբ՝ այն էլ առանց դրավերջնական եզրագծերի պատշաճ հիմնավորման,
- հանքայնացման աստիճանի բարձր փոփոխականության պայմաններում, պաշարների հաշվարկման համար հանքաբերության գործակցի կիրառման փոխարեն, կոնդիցիոն և ոչ կոնդիցիոն միջակայքերի ուղղակի երկրաչափացման եղանակի անհարկի օգտագործմամբ և մի շարք այլ իրողություններով:

Նշված պատճառաբանումների մի մասը փաստորեն վերաբերվում է օբյեկտի թերուսումնասիրվածությանը, իսկ հիմնական մասը կապված է կամերալ աշխատանքների հետ:

«Հաշվի առնելով համաշխարհային ներկայիս տնտեսական ճգնաժամի պայմաններում Թուխմանուկի ոսկու հանքավայրի հետագա անընդմեջ շահագործման և գործող արտադրության ընդլայնման արդիականությունը և նկատի ունենալով նշված նպատակների իրագործման համար հանքավայրի պաշարների շուտափույթ հաստատման անհրաժեշտությունը...», գործակալությունը իր վերոնշյալ Որոշման 4-րդ կետով հնարավոր համարեց, որ ընկերությունը, հիմք ընդունելով միայն մինչ օրս կուտակված երկրաբանական տեղեկատվությունը, սեղմ ժամկետներում իրականացնի բացառապես կամերալ աշխատանքներ՝ վերացնելով սկզբնական նյութերում առկա թերություններն ու անճշտությունները և վերահաշվարկելով ու հաստատման ներկայացնելով օբյեկտի հաշվեկշռային պաշարները, իսկ դրա թերուսումնասիրվածության հետ կապված խնդիրների լուծմանը անդրադառնա հանքավայրի շահագործման նախագծի մշակման փուլում:

Սույն լրացումը, նվիրված լինելով այս հանձնարարականի կատարմանը, օբյեկտի պաշարների վերահաշվարկման հետ մեկտեղ իր մեջ ընդգրկում է նաև շարքային մուշների հիմնական անալիզների առկա արդյունքների արժանահավատության գնահատականը (Հավելված 1-Լ) և երակիկացանավոր հանքայնացման գոտու ապարների ծավալային զանգվածի հիմնավորումը (Հավելված 2-Լ): Ընդ որում, ստորև բերվում է միայն նախկինում հաստատված պաշարներով թիվ 1 և 15 երակների որակաքանակական ցուցանիշների վերահաշվարկը՝ տեղամասի լրահետախուզման արդյունքների հաշվառմամբ, իսկ շտոկվերկում պարփակված հաշվեկշռային պաշարների որակաքանակական

ցուցանիշները փոխառնվում են ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից ձևավորած փորձագիտական խմբի նյութերից:


Թեև փորձագիտական խումբը շտոկվերկի պաշարների իր կողմից կատարված հաշվարկման արդյունքների ճշտությունը անբավարար էր համարել դրանց հաստատման համար, այնուամենայնիվ, հաշվի առնելով ներքո շարադրյալը, ընկերությունը գտնում է, որ մնան գնահատականը անհարկի խստացված է:

Լրահետախուզման փուլում անցած հորատանցքերի սկզբնակետերի բացարձակ նիշերը որոշվել են դաշտում կատարված տոպոմարկշեյթերական չափագրումներով և համապատասխանում են իրականությանը, ուստի և հորատանցքերի սյունակների տրոհումը 40-ում մետրանոց հանքաստիճանային միջակայքերի և վերջիններիս սահմաններում մետաղների միջին պարունակությունների հաշվարկը իրականացված են անսխալ: Տոպոգրաֆիական հիմքի անկատարելությունը անշուշտ հանգեցրել է պաշարների բլոկավորման հատակագծերում հաշվարկային բլոկների մակերեսների որոշակի սխալանքի, ի հաշիվ այդ բլոկները սահմանափակող հորիզոնականների իրական դիրքից թույլ տված շեղման: Ընդ որում, նշված շեղումը որպես կանոն չի գերազանցել 5-7 մ-ը և բերել է չափված մակերեսների և հաշվարկված պաշարների առավելագույնս $\pm 2-3\%$ սխալանքի:

Անդրադառնալով երակիկացանավոր հանքայնացման գոտու ապարներում ոսկու միջին պարունակությունների հաշվարկներում երակները բնութագրող շարքային մնուշների անհարկի ընդգրկման հարցին, հարկ է հաշվի առնել, որ այդ հաշվարկներում մասնակցել են ընդամենը 4511 շարքային մնուշներ, որոնցից երակային մարմինները բնութագրվում են միայն 58 մնուշներով: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում երակները բնութագրող մնուշների ազդեցությունը մետաղների միջին պարունակությունների վրա աննշան է և թույլ տված սխալանքի մեծությունը չի գերազանցի տոկոսի տասներորդական մասերը: Ի դեպ, մետաղների միջին պարունակությունների հաշվարկմանը մասնակցած շարքային մնուշների ամբողջ ընտրանու մեջ «մրրկային» կարող էին ճանաչվել միայն երակային մարմինները բնութագրող մնուշները, որոնց ազդեցությունը հաշվարկների արդյունքների ճշտության վրա նույնպես կարող է անտեսվել:

Այսպիսով, երակիկացանավոր հանքայնացման գոտու պաշարների՝ փորձագիտական խմբի կողմից կատարված հաշվարկման արդյունքները, մեր գնահատմամբ, բավականին հավաստի են և օբյեկտի ռեսուրսային ներուժը ընդունելի արժանահավատությամբ գնահատելու համար մնում է միայն ճշգրտել երակների նախկինում հաստատված պաշարները:

Թուխամանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի թիվ 1 և 15 երակների պաշարները հաստատվել էին ՀՀ ՕՀՊԳ-ի 26.01.2004թ. № 28 Որոշմամբ, որի Առդիր 1-ի 4-րդ հավելվածում բերված է այդ պաշարների ճշգրտված հաշվարկը: Պաշարների



հաշվարկի հիմքում դրված էին Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում 2001-03թ.թ. իրականացված մանրազնին հետախուզման արդյունքները: Օբյեկտի լրահետախուզման փուլում անցած հորատանցքերի մի մասով ապահովվել էր ինչպես երակիկացանավոր հանքայնացման գոտու, այնպես էլ այդ գոտում պարփակված երակային մարմինների նմուշարկումը: Երակային մարմինների լրացուցիչ հատումների առկայությունը, բնականաբար, պահանջում է դրանց պաշարների վերաբերազմում և վերահաշվարկ:

Երակային մարմինների պաշարների վերաբերազմումն իրականացվել է դրանց ուղղաձիգ պրոեկցիաների վրա (Նկար 1 և 2), հաշվի առնելով ոչ միայն լրահետախուզման ստացված նոր հատույթները, այլև ՀՀ ՕՀՊԳ-ի 18.09.2009թ. № 230 Որոշմամբ հաստատված «Պաշարների հաշվարկման ստորին սահմանը», որը մինչ այդ Որոշման ընդունումը գործող կոնդիցիաների պարամետրերի համեմատ իջեցվել է 20 մետրով և կապակցվել է 2130.0մ բացարձակ նիշ ունեցող հորիզոնի հետ:

Կատարված վերաբերազմման արդյունքում, որոշ չափով ընդլայնվել են յուրաքանչյուր երակում առանձնացված 1-C₁ հաշվարկային բլոկների սահմանները (ի հաշիվ լրացուցիչ հանքային հատույթների), ինչպես նաև երակ 1-ի 4-C₂ և երակ 15-ի 4-C₂, 5-C₂ և 7-C₂ հաշվարկային բլոկների սահմանները (ի հաշիվ պաշարների հաշվարկման ստորին սահմանի իջեցման): Գործնականում անփոփոխ են մնացել երակ 1-ի 3-C₂ և երակ 15-ի 2-C₁, 3-C₁ և 6-C₂ հաշվարկային բլոկների սահմանները:

Լրացուցիչ հանքային հատույթների հաշվին առանձին հաշվարկային բլոկներում փոփոխվել են (հաստատվածի համեմատ) մետաղների միջին պարունակությունները, որոնց ճշգրտված մեծությունները հիմնավորված են աղյուսակ 1-ում: Այդ հաշվարկներում, մինչ լրահետախուզումը անցած հետախուզափորվածքների տվյալները փոխառնված են ՀՀ ՕՀՊԳ-ի 26.01.2004թ. № 28 Որոշման Առդիր 1-ի Հավելված 4-ից:

Երակային մարմինների պաշարների վերահաշվարկն իրականացված է 2-րդ աղյուսակում:

Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի մինչ օրս հետախուզված հաշվեկշռային պաշարներն ամփոփված են 3-րդ աղյուսակում, որտեղ շտուկվերկայն տիպի հանքայնացմանը համապատասխանող տվյալները փոխառնված են ՀՀ ՕՀՊԳ-ի 18.09.2009թ. № 230 Որոշման Առդիր 1-ի Հավելված 2-ից:

Տվյալ նյութերում բացակայում է բացահանքի վերջնական եզրագծերի հիմնավորումն ու դրա սահմաններում հաշվեկշռային պաշարների հաշվարկը: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ բացահանքի վերջնական եզրագծերի դիրքը կանխորոշող և ՀՀ ՕՀՊԳ-ի 18.09.2009թ. № 230 Որոշմամբ հաստատված մակաբացման սահմանային գործակցի մեծությունը բավականին մեծ է (9.0 մ³/տ), կարելի է վստահորեն պնդել, որ

այստեղ հաշվարկված պաշարները գործնականում ամբողջությամբ կարող են ընդգրկվել նախագծվելիք բացահանքի սահմաններով, որոնց մեջ հնարավոր է տարանջատել առաջնահերթ շահագործման բացահանքը՝ ոսկու առվագն 2գ/տ միջին պարունակությամբ հանքաքարի պաշարներով:

Սույն լրացման մեջ հաշվարկված պաշարներն իրենց ուսումնասիրվածության աստիճանով գործնականում ամբողջությամբ բավարարում են միջազգային դասակարգմամբ չափագրված և հաշվարկված (measured & indicated) ռեսուրսներին ներկայացվող պահանջներին:

Այսպիսով, 3-րդ աղյուսակում ամփոփված որակաքանակական ցուցանիշները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի հաշվեկշռային պաշարները ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից հաստատելու համար:

Ընկերությունը պատրաստ է կրել հաստատման ներկայացված պաշարների հնարավոր չհավաստման հետ կապված բոլոր ռիսկերը: Ինչ վերաբերվում է օբյեկտի թերուսումնասիրվածությանը վերաբերող խնդիրներին (երակիկացանավոր հանքայնացման գոտու և դրանում օքսիդացած հանքաքարի տարածման սահմանների անորոշություն, տուպոգրաֆիական հիքի անկատարելիություն, մի խումբ շարքային նմուշների անալիզների բացակայություն կամ ցածր արժանահավատություն, ստուգողական անալիզների անբավարար քանակություն, հանքաքարում ուղեկից բաղադրիչների գնահատման բացակայություն և այլն), ապա ընկերությունը ի վիճակի է ապահովել դրանց լիարժեք լուծումը օբյեկտի լրահետախուզման 2-րդ փուլում, որի իրականացումն արդեն իսկ ընդգրկված է ընկերության հաջորդ տարվա աշխատանքային ծրագրերում:


Սույն լրացման հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից ձևավորված փորձագիտական խմբի մասնագետներին, սկզբնական նյութերի վերամշակման ընթացքում ցուցաբերած մեթոդական և գործնական բնույթի խորհուրդների և աջակցության համար:

ԹՈՒՆԱՄԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ ԵՐԱԿ 1 - Ի ՊՐՈՅԵԿՑԻԱՆ ՈՒՂԱՅԻԳ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մասշտաբ 1 : 5000



Բլոկ 3 - C₂
 $S = 39640 \text{ մ}^2$; $m = 1.00 \text{ մ}$
 $Q = 113.0 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՊ}} = 582.95 \text{ կգ (5.16 գ/տ)}$
 $P_{\text{ԱԳ}} = 2.82 \text{ տ (24.98 գ/տ)}$



Բլոկ 1 - C₁
 $S = 42438 \text{ մ}^2$; $m = 1.02 \text{ մ}$
 $Q = 123.4 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՊ}} = 620.54 \text{ կգ (5.03 գ/տ)}$
 $P_{\text{ԱԳ}} = 1.76 \text{ տ (14.24 գ/տ)}$

Բլոկ 4 - C₂
 $S = 78772 \text{ մ}^2$; $m = 1.30 \text{ մ}$
 $Q = 291.8 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՊ}} = 1611.01 \text{ կգ (5.52 գ/տ)}$
 $P_{\text{ԱԳ}} = 7.36 \text{ տ (25.22 գ/տ)}$

Բլոկ 2 - C₂
 $S = 31592 \text{ մ}^2$; $m = 1.02 \text{ մ}$
 $Q = 91.8 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՊ}} = 461.94 \text{ կգ (5.03 գ/տ)}$
 $P_{\text{ԱԳ}} = 1.31 \text{ տ (14.24 գ/տ)}$

Պաշարների հաշվարկման ստորին սահմանը (2130.0 մ)

Կարծիր գոյնով նշված են լրահատախառնի վրայի հորատանցքերը

Նկար 1




ԵՏՈՒՄ

ԹՈՒՆՄԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ
ԵՐԱԿ 15-Ի ՊՐՈՅԵԿՑԻԱՆ ՈՒՂՎԱՅԻԳ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մասշտաբ 1:5000



Բլոկ 6 - C₂
 $S = 48328 \text{ մ}^2$; $m = 1.00 \text{ մ}$
 $Q = 137.7 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 712.09 \text{ կգ (5.17 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 2.87 \text{ տ (20.81 կ/տ)}$



Բլոկ 2 - C₁
 $S = 24164 \text{ մ}^2$; $m = 1.11 \text{ մ}$
 $Q = 76.4 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 503.76 \text{ կգ (6.59 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 5.64 \text{ տ (73.81 կ/տ)}$

Բլոկ 1 - C₁
 $S = 35640 \text{ մ}^2$; $m = 1.21 \text{ մ}$
 $Q = 122.9 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 718.99 \text{ կգ (5.85 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 3.32 \text{ տ (26.99 կ/տ)}$

Բլոկ 7 - C₂
 $S = 76529 \text{ մ}^2$; $m = 1.00 \text{ մ}$
 $Q = 218.1 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 1127.62 \text{ կգ (5.17 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 4.54 \text{ տ (20.81 կ/տ)}$

Բլոկ 3 - C₁
 $S = 13288 \text{ մ}^2$; $m = 0.98 \text{ մ}$
 $Q = 37.1 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 270.92 \text{ կգ (7.30 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 1.23 \text{ տ (33.03 կ/տ)}$

Բլոկ 5 - C₂
 $S = 27207 \text{ մ}^2$; $m = 0.98 \text{ մ}$
 $Q = 76.0 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 554.72 \text{ կգ (7.30 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 2.51 \text{ տ (33.03 կ/տ)}$

Բլոկ 4 - C₂
 $S = 28363 \text{ մ}^2$; $m = 1.21 \text{ մ}$
 $Q = 97.8 \text{ հազ.տ}$
 $P_{\text{ԱՎ}} = 572.19 \text{ կգ (5.85 կ/տ)}$
 $P_{\text{ԱՑ}} = 2.64 \text{ տ (26.99 կ/տ)}$

Պաշտպանիկի հանվարկման սահման հարկան (2130.0 մ)

Արարմիր գույնով նշված են լրահետախուզման փուլի հորատանցքերը

Հանքային մարմինների միջին հզորությունների և օգտակար բաղադրիչների միջին պարունակությունների հաշվարկը

Հաշվարկային բնիկը	Հետախուզական փորվածքը (նմուշի համարը)	Ն, մեղմություններ	Մետաղների պարունակությունները, գ/տ						Մետրոգրամները					
			Au		Ag		Au		Ag					
			իրական	հարբեցումից հետո	իրական	հարբեցումից հետո	իրական	հարբեցումից հետո	իրական	հարբեցումից հետո				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11				
Ե Ր Ա Կ № 1														
Բնիկ I-C ₁	Հետախուզաառու - 95	1.2	5.60	5.60	47.40	47.40	6.72	6.72	6.72	6.72	56.88	56.88		
	Հետախուզակոր - 12	0.9	1.20	1.20	7.60	7.60	1.08	1.08	1.08	1.08	6.84	6.84		
	Խրամ - 1	1.0	6.80	6.80	32.40	32.40	6.80	6.80	6.80	6.80	32.40	32.40		
	Մաքրվածք - 2/02	1.2	4.20	4.20	240.50	47.40	5.04	5.04	5.04	5.04	288.60	56.88		
	Մաքրվածք - 1/02	1.2	1.00	1.00	154.60	47.40	1.20	1.20	1.20	1.20	185.52	56.88		
	Մաքրվածք - 372	0.8	23.40	10.80	28.20	28.20	18.72	8.64	8.64	8.64	22.56	22.56		
	Մաքրվածք - 5	0.4	4.80	4.80	6.20	6.20	1.92	1.92	1.92	1.92	2.48	2.48		
	Մաքրվածք - 617	1.0	8.80	8.80	15.60	15.60	8.80	8.80	8.80	8.80	15.60	15.60		
	T - 4-4 - 06(GGMT 01548)	1.0	3.10	3.10	4.60	4.60	3.10	3.10	3.10	3.10	4.60	4.60		
	Հորատանցք - 7	1.1	3.80	3.80	8.50	8.50	4.18	4.18	4.18	4.18	9.35	9.35		
	T - 38 - 06 (GGMТ 07991)	1.0	3.90	3.90	3.20	3.20	3.90	3.90	3.90	3.90	3.20	3.20		
	T - 60 - 06 (GGMТ 12297)	1.0	1.20	1.20	6.80	6.80	1.20	1.20	1.20	1.20	6.80	6.80		
	T - 24 - 06 (GGMТ 05402)	1.0	10.00	10.00	2.40	2.40	10.00	10.00	10.00	10.00	2.40	2.40		
	Հորատանցք - 31	1.5	10.80	10.80	47.40	47.40	16.20	16.20	16.20	16.20	71.10	71.10		
	T - 53 - 06 (GGMТ 11297)	1.0	9.60	9.60	9.60	9.60	9.60	9.60	9.60	9.60	9.60	9.60		
T - 85 - 07 (GGMТ 13946)	1.0	4.00	4.00	4.00	4.00	4.00	4.00	4.00	4.00	4.00	4.00			
Հորատանցք - 32	1.1	5.40	5.40	41.80	41.80	5.94	5.94	5.94	5.94	45.98	45.98			
Հորատանցք - 6	1.4	5.50	5.50	11.40	11.40	7.70	7.70	7.70	7.70	15.96	15.96			
T - 30 - 06 (GGMТ 07150)	1.0	2.30	2.30	1.40	1.40	2.30	2.30	2.30	2.30	1.40	1.40			
Հորատանցք - 8	0.8	6.00	6.00	28.10	28.10	4.80	4.80	4.80	4.80	22.48	22.48			
Հորատանցք - 1	1.0	6.20	6.20	14.60	14.60	6.20	6.20	6.20	6.20	14.60	14.60			



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Բլոկ I-C ₁	T - 90 - 07 (GGMT 15213)		1.0	2.40	2.40	7.60	7.60	2.40	2.40	7.60	7.60
	T - 91 - 07 (GGMT 15734)		1.0	7.20	7.20	0.80	0.80	7.20	7.20	0.80	0.80
	T - 32 - 06 (GGMT 07866)		1.0	3.10	3.10	4.60	4.60	3.10	3.10	4.60	4.60
	T - 31 - 06 (GGMT 07625)		1.0	3.90	3.90	3.60	3.60	3.90	3.90	3.60	3.60
	T - 34 - 06 (GGMT 07232)		1.0	6.20	6.20	4.20	4.20	6.20	6.20	4.20	4.20
	T - 40 - 06 (GGMT 08782)		1.0	8.19	8.19	4.20	4.20	8.19	8.19	4.20	4.20
	T - 45 - 06 (GGMT 08654)		1.0	7.02	7.02	4.80	4.80	7.02	7.02	4.80	4.80
	Հորատանցք - 10		1.1	1.40	1.40	11.10	11.10	1.54	1.54	12.21	12.21
	T - 39 - 06 (GGMT 08163)		1.0	2.34	2.34	3.40	3.40	2.34	2.34	3.40	3.40
	T - 41 - 06 (GGMT 08356)		1.0	3.12	3.12	4.00	4.00	3.12	3.12	4.00	4.00
